

**ԿԱՐՍԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԵՈՒՐՋ ԾԱՎԱԼՎԱԾ ՊԱՅՋԱՐԸ
(1918 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1919 թ. ԱՊՐԻԼ)**

Գ. 3. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի անկապտելի մասը կազմող Կարսի նահանգի շուրջ առաջին աշխարհամարտից հետո ծավալված պայքարը բացահայտեց Անգլիայի երկդիմի քաղաքականությունը հայության նկատմամբ: Պատերազմի ժամանակ Կարսի նահանգը ազատագրվեց Թուրքիայից, բայց ռուսական բանակի ետ քաշվելու հետևանքով այն վերանվաճվեց: Մուդրոսի զինադադարից հետո թուրքերը պարտավոր էին հետ քաշվել մինչև 1914 թ. օգոստոսի 1-ի սահմանները, բայց ամեն ինչ անում էին ազատվելից տարածքներն իրենց ազդեցության ներքո պահելու և դրանց նկատմամբ Հայաստանի իրավունքները առ ոչինչ դարձնելու ուղղությամբ: Մուդրոսի զինադադարի պահանջների իրականացումը դրված էր անգլիական զորական առաքելության վրա: Ի դեպ, որպես Ռուսաստանի նախկին տարածք՝ Կարսի նահանգի նկատմամբ անտարբեր չէր նաև Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը, որի ձգտումների ու ազդեցության տարածման դեմ կտրականապես հանդես էր գալիս Մեծ Բրիտանիան:

1919 թ. հունվարի 6-ին Ալեքսանդրապոլում գեներալ Ջ. Ուոքերը իր գնացքում միջանդամյա տեսակցություն ունեցավ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և զորական նախարարի ներկայացուցիչ Գամազովի հետ: Նույն օրը Ջ. Ուոքերը Ս. Տիգրանյանին հանձնեց մի պաշտոնական գրություն՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Միմիստր-նախագահին, որով հայտնում էր, որ «...եկել է Անդրկովկաս որպես զորական ներկայացուցիչ Մեծ Բրիտանիայի՝ ենթակայ դաշնակից պետությունների բարձր մեծաւորին և անգլիական գլխաւոր հրամանատարին Կ.Պոլսում, որ իրեն հետ անմիջական առնչութիւն ունեն հետևեալ երկրները՝ Հայաստանի, ...Վրաստանի Հանրապետութիւնները, Բաթումի ...և Կարսի նահանգները, որ նման ֆունկցիաներ Ադրբեջանի և Հիւսիսային Կովկասի հանրապետութիւնների վերաբերմամբ ունի գեներալ-մայոր Տոմսոնը, անգլիական զորքերի հրամանատարը Բազում»¹: Այնուհետև գրույցի ընթացքում Ջ. Ուոքերը հայտնում է, որ իրեն հանձնարարված է ֆրանսիական առաքելության գնդապետ Օարդինիեի հետ հետամուտ լինել պարտված Թուրքիայի և դաշնակից պետությունների միջև կնքված Մուդրոսի զինադադարի որոշումների կատարման ընթացքին²: Ինչպես ասվեց, համաձայն զինադադարի՝ թուրքական զորքը պետք է հեռանար Կարսի նահանգից մինչև նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանը: Կարսի նահանգի նկատմամբ, որը բաժանված էր Կարսի, Կաղզվանի, Արդահանի և Օլթիի շրջանների, պետք է վերահսկողություն սահմաներ Հայաստանի Հանրապետությունը: Սակայն թուրքական 9-րդ բանակի գլխավոր հրամանատար Մահմուդ Օնֆքեթ փաշան միտումնավոր ձգձգեց նահանգի հանձնումը Հայաստանին, որը հնարավորություն և պայմաններ ստեղծեց 1918 թ. նոյեմբերին Կարսում մահմեդական Ազգային խորհուրդ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.60:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղը:

ձևավորելու համար⁴: Վերջինիս նպատակն էր նահանգը պահել թուրքերի ազդեցության ոլորտում և թույլ չտալ 1918 թ. սկզբներին թուրքերի հարձակման հետևանքով Կարսից հարկադրաբար Երևանի և Թիֆլիսի նահանգներ գաղթած ավելի քան 100 հազար հայերի վերադարձը իրենց հայրենի տները⁵:

1919 թ. հունվարի 7-ին Կարսում Ջ. Ուոքերը Օնֆքեթ փաշային ներկայացրեց իր 8 հրահանգները: Հրահանգի 1-ին կետում նշում էր. «1. Համաձայն դաշնակից պետությունների կողմից ինձ տված իշխանությանը՝ հայտնում եմ նորին գերագանցություն Օնդի փաշային, որ ես նպատակ ունեմ մոտ օրերս ստանձնել Ղարսի նահանգի զինվորական ու քաղաքացիական կառավարումը, ինչպես այն կատարեցի Բաթումի վերաբերյալ:

Իմ ներկայացուցիչը, որ Ղարսի զինվորական ղեկավար է կոչվելու, հավանական է հունվարի 12-ին 1919 թ. կլինի Ղարսում, 200 ուղեկիցների հետ միասին: Նրա հետ եմ գալու Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված անհրաժեշտ քանակությամբ պետական ծառայողներ:

Խնդրում եմ Ձերդ գերագանցությանը, որ այդ ծառայողներն ու վարչությունը նպատակահարմար կերպով տեղավորվելու կտրուկ կարգադրություն անեք»⁶: Ջ. Ուոքերը պահանջեց Օնֆքեթ փաշայից անմիջապես վերացնել թուրքական զինվորական պահակախմբերը Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ, բացել սահմանը ժողովրդի և գնացքների ազատ երթևեկության համար⁷, արագացնել թուրքական զորքերի դուրսբերումը նահանգից ոչ ուշ, քան մինչև հունվարի 25-ը⁸, չարտահանել նահանգից «...անհատական սեփականություն կամ հանդերձանք», բացի այն ռազմական իրերից, որ թուրքական զորքը բերել էր իր հետ: Չէր թույլատրվում նաև մեկնելուց առաջ ոչնչացնել որևէ բան⁹: Օնֆքեթ փաշային տրվում էր 25000 փութ ցորեն՝ որպես ճանապարհի սնունդ հետացող զորքին Կարսից Էրզրում հասնելու համար¹⁰:

Օնֆքեթ փաշային հրահանգներ տալուց հետո Ջ. Ուոքերը հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, Կարսից վերադառնալիս Ալեքսանդրապոլում համաձայնագիր ստորագրեց Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարի հետ: Ըստ համաձայնագրի 1-ին կետի՝ ստեղծվելու էր Կարսի քաղաքացիական վարչություն. «Հայկական կառավարությունը, - ասված է համաձայնագրում, - պատրաստ է ծառայողներ նշանակել Ղարսի նահանգի և քաղաքի քաղաքացիական վարչությունը վարելու համար, սպասելով խաղաղության կոնֆերանսի որոշմանը»¹¹: Ջ. Ուոքերը Կարսում նշանակելու էր անգլիական զորական կառավարիչ, որին ենթարկվելու էր նահանգի հայկական քաղաքացիական վարչությունը (ադմինիստրացիան): Հայաստանի կառավարությունը հայտնեց իր համաձայնությունը և խնդրեց հետևողականորեն իրականացնել հետևյալ հրահանգները. «Առաջին՝ ապահովել հայ գաղթականների վերադարձը Կարսի նահանգը: Երկրորդ՝ ուղարկել ցորեն, հաց ազգաբնակչության համար, երրորդ՝ ապահովել Ղարսի

⁴ St' u Richard G. Hovannisian, 'The Armenian occupation of Kars, 1919, In "Recent Studies in modern Armenian History", National Association for Armenian and Research (NAASR), inc., Cambridge, Mass., 1972, էջ 27, Հ. Հակոբյան, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002, էջ 183:

⁵ St' u Ազապի Նասիպեան, Բրիտանիա եւ Հայկական Հարցը 1915-1923, Պեյրուք, 1994, էջ 166-167:

⁶ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.47 ա:

⁷ St' u ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.61, ֆ. Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.47ա:

⁸ St' u նույն տեղը, թ.61:

⁹ St' u ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.47բ:

¹⁰ St' u ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.61:

¹¹ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.34ա:

նահանգում մնացած կայքը կողոպուտից»¹²: Հայաստանի կառավարության կողմից նշանակված պաշտոնյաները ենթարկվելու էին Հայաստանի Ներքին գործերի նախարարությանը և գործելու էին նրա հրահանգների համաձայն: Ներքին գործերի նախարարը Կարսի նահանգային քաղաքացիական վարչությանը հրահանգներ էր տալու անգլիական զորական կառավարչի համաձայնությամբ: Տարածայնության պարագայում հարցը լուծելու է Ջ. Ուոքերը՝ նախապես բանակցելով Հայաստանի կառավարության հետ: Անգլիական զորական կառավարիչը և Հայաստանի կառավարության կողմից նշանակված պաշտոնյաները մինչև հունվարի կեսը պետք է Ալեքսանդրապոլից մեկնեն Կարս¹³: Գնդապետ Կ. Թեմպերլերը նշանակվեց Կարսի նահանգի զինվորական կառավարիչ: Հունվարի 5-ին շուրջ 120 անգլիական զինվոր 9 սպայի հետ մեկնեցին Կարս¹⁴: 1919 թ. հունվարի 14-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց Կարսի նահանգը հանրապետությանը միացնելու մասին որոշումը: Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի կարգադրությամբ կազմակերպվեց. «ա) նահանգի և շրջանների քաղաքացիական վարչությունը, բ) նահանգի և շրջանների միլիցիա և ժանդարմերի 400 հոգուց՝ համապատասխան սպայական կազմով, գ) երկաթուղու Ղարս-Ալեքսանդրապոլ գծի վարչությունն ու ծառայողների շտաբը», նշանակվեց. «ա) հատուկ անձ պարենավորման նյութերի թուրքական պահեստները ի հայտ բերելու և անգլիական զենքային տեղեկացնելու համար, բ) խնամատարական միմիստրության ներկայացուցիչ՝ գաղթականների դարձն ու տեղափոխումը և նոցա համար սննդատու կացարաններ բանալու համար, գ) Ղարսի անգլիական զինվորական նահանգապետի մոտ, նրա տրամադրության տակ գտնվելու համար, 4 սպա, ըստ թույլտվության զինվորական միմիստրի»¹⁵:

Հունվարի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց Կարսի նահանգում քաղաքացիական իշխանություն հաստատելու մասին որոշումը: Կարսի քաղաքացիական իշխանությունը կազմված էր 41 պաշտոնյաներից: Պետ նշանակվեց Ստ. Ղորղանյանը, ընդհանուր ոստիկանության պետ՝ զրնդապետ Շահբազյանը, իսկ երկաթուղու կառավարիչ՝ ինժեներ Փիրումյանը: Հունվարի 17-ին Ալ. Խատիսյանը Հայաստանի խորհրդում հայտնեց, որ հունվարի 25-ին Կարսը հանձնելու են Հայաստանին, և իշխանությունը պատրաստ է ընդունելու այն: «Մենք վճռել ենք մտցնել 2 էսկադրոն զինորություն ընտիր մասերից և 400 պահակ իբրև միլիցիա՝ յոյս ենք տուիլ, որ ոչ մի անպատասխանատու խումբ մուտք չպիտի ունենայ Կարսի նահանգը, թեև դրությունը բաւական լարած է, բայց կամաց-կամաց լաւանում է»¹⁶: Կարսի քաղաքացիական իշխանությունը պատրաստ էր կատարել իր պարտականությունները նահանգում: Սակայն Կարսի թուրքական զինվորական հրամանատարությունը և մահմեդական Ազգային խորհուրդը չկատարեցին հայկական քաղաքացիական իշխանության կարգադրությունները: Ավելին, նրանց աջակցությամբ հունվարի 17-18-ին հարյուրից ավելի պատվիրակներ հավաքվեցին Կարսում՝ միասնական դիմադրական ծրագիր մշակելու: Արդյունքը եղավ այն, որ միանգամից հռչակեցին «Հարավ-Արևմտյան

¹² ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.70:

¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.62, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.34a:

¹⁴ Տե՛ս ԴԱ ՔՓ, փ.446, օտ.1, Ժ.9, լ.31, ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.71, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.26:

¹⁵ Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի Քիվանդության պատճառով նրա պաշտոնը 1919 թ. հունվարի 3-ին Միմիստր-նախագահի № 18 հրամանով ժամանակավորապես հանձնվեց խնամատարության նախարար Ալեքսանդր Խատիսյանին:

¹⁶ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն)», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, եր., 2000, էջ 84:

¹⁶ ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.71:

Կովկասյան Հանրապետությունը» Կարս և Արևելյան կամ «Արաքսյան Հանրապետությունը»՝ Նախիջևան կենտրոններով¹⁷ կազմելով ժամանակավոր կառավարություն՝ «Օուրա»¹⁸: Վերջինս բաղկացած էր բացառապես մահմեդականներից և ամբողջովին գտնվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործիչներ Նուրի (Էնվերի եղբայրը) և Խալիլ փաշաների ազդեցության ներքո¹⁹: Այդ «Հանրապետությունը» ընդունեց օսմանյան դրոշը, թուրքերենը հռչակեց պետական լեզու, իսկ տարածքը հայտարարեց Աջարիայից, այսինքն՝ Սև ծովից մինչև Պարսկաստանի սահմանն ընկած տարածքները ներառյալ Նախիջևանը՝ հավակնելով նաև Ախալցխային²⁰: Փաստորեն այն վտանգ էր ստեղծում Հայաստանի և Վրաստանի համար:

Կարսի «Հարավ-Արևմտյան Հանրապետությունը» ուներ իր «գորքը»՝ հինգ-վեցհազարանոց ավազակախմբեր, որոնց առատորեն թուրքական զենք և զինամթերք էր մատակարարվում: «Չորքի» կազմում կային թուրքական սպաներ և ոչ սակավաթիվ ասկյարներ²¹: Կարսի անգլիական զինվորական կառավարիչ գնդապետ Կ. Թեմպերլեյին՝ 1919 թ. հունվարի 26-ին Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելության ներկայացուցչի ուղղած հայտագրում ասված է. «Այժմ ես հաստատ տեղեկություն ունեմ, որ Օնֆքի-փաշան այդ կազմակերպության ոգին է, և Կովկասից մեկնելուց առաջ ինքն է ամենուրեք ստեղծել կենտրոններ, նրանց տրամադրվել է զենք, սպաներ և հրահանգիչներ, ինչպես նաև զինվորներ, իբր թե զորացրված են: 12-րդ դիվիզիայի հրամանատար Ալի Ռիֆատ բեյն մեզ անձամբ հայտնեց, որ թաթարական կազմակերպություններում մեծ քանակությամբ զորացրված թուրք սպաներ կան: Թրքական 9-րդ բանակը, զորացրման ժամանակ՝ թաթարներին շատ զինամթերք և զենք է թողել»²²: «Օուրային» դրամական օգնություն էր ցույց տալիս նաև Ադրբեջանը, որը և ուղղություն էր տալիս նրա գործունեությանը²³:

Կարսում թուրքական իշխանության՝ «Օուրայի» ստեղծումը բացահայտում է Թուրքիայի ձգտումը. չազատել հայկական տարածքները և որքան հնարավոր է դրանք պահել իր ազդեցության տակ: Սա միաժամանակ խոսում է անգլիական գորահրամանատարության՝ իր խորքում հակահայկական գործելակերպի, իր վրա դրված պարտավորությունների ոչ հետևողական իրագործման մասին: Այլապես թուրքերն ինչպե՞ս կարող էին նման քայլ ձեռնարկել, եթե համոզված չլիներին, որ անգլիացիները կհանդուրժեն: Նրանց վաղուց հայտնի էր Անգլիայի թուրքամետ կողմնորոշումը և հակահայկական գործելակերպը: Հենց դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Ջ. Ուոքերը, որը օրեր առաջ Օնֆքեթ փաշային հրահանգել էր հեռանալ Կարսի նահանգից, իսկ Ս. Տիգրանյանին տեղեկացրել էր նահանգը Հայաստանին հանձնելու մասին, շուտով կտրուկ փոխեց իր դիրքորոշումը: Չհարգելով իր իսկ արձակած հրահանգները՝ նա ոչ միայն չսանձեց, չարգելեց Կարսի նահանգում անօրինական «Հարավ-Արևմտյան Հանրապետության» հռչակումը, այլև գաղտնի կամ բացահայտ ամեն կերպ փորձեց աջակցել նրա

¹⁷ Մանրամասն տես՝ Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ), Եր., 2002:

¹⁸ Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 183:

¹⁹ Տե՛ս «Вопросы истории», 1994, № 1, էջ 120, А. Деникин, Очерки русской смуты, в. 3 книгах.- Книга 3, т. 4, т. 5, «Вооруженные силы Юга России», էջ 210:

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-223, ց.1, գ.75, թ.21, Richard G. Hovannisian, նշվ. աշխ., էջ 23-24, Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 183:

²¹ Տե՛ս «Вопросы истории», նշվ. տեղը, А. Деникин, նշվ. աշխ., էջ 210:

²² ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս 1, թ. 88 а:

²³ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 309:

կատարմանը: Բաքվում տեղեկատվական բյուրոյի նախագահ Ա. Մալխազովը 1919 թ. փետրվարի 7-ի իր զեկուցագրում այդ կապակցությամբ հայտնում է. «Հաստատվում է, որ այդ կառավարությանը («Շուրա» - Գ.Պ.) գաղտնի աջակցություն է ցուցաբերում անգլիական կառավարությունը»²⁴: Ավելին, Ջ. Ուոքերը հունվարի 21-ին Հայաստանի Արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում գրում է. «...ցավոք սրտի ստիպված եմ չեղյալ հայտարարել մեր միջև կատարված կարգադրությունը: Ղարսի բրիտանական զինվորական կառավարիչին հրաման տվի ետ ուղարկել այդ ծառայողներին Ալեքսանդրապոլ»²⁵ (ընդգծումը մերն է. - Գ.Պ.): Նույն նամակում Ջ. Ուոքերը ներկայացնում է նաև մերժման դրդապատճառները. «Ղարսի բրիտանական զինվորական կառավարիչից նոր ուսպորտ եմ ստացել, որ փորձելով հայ կառավարիչներ մտցնել քաղաքում, որոնք պետք է աշխատեին իր հրամանատարության տակ, ինչպես մենք փոխադարձաբար պայմանավորվել էինք, այժմ նա գտնում է, որ դա անհնար է կատարել:

Դրա պատճառը Ղարսում գտնվող մուսուլմանների խիստ շեշտված հակակրանքն է հայերի նկատմամբ:

Պետք է նաև ասել, որ այդ աղմուկաբերությունների կամ նրանցից մի քանիսի վարվելակերպը հաշտվողական բնույթ չէր կրում: Բրիտանական բանակի մի սպա տեղեկացրեց, որ հայ ծառայողները քաղաք մտան ազգային հայկական մի մեծ դրոշակ պարզած, իսկ նրանցից մի քանիսը զնացքի միջից անվայել խոսքեր էին անտում մուսուլմանների հասցեին: Պարզ է, որ նրանք լավ չէին հասկացել իրենց առաքելության նպատակները:

Վստահ եմ, որ Ձերդ գերազանցությունը կհասկանա, որ երկու կողմերի ուսայական հակակրանքի առկայության դեպքում, անհնար է նոր փորձ կատարել»²⁶: Այսինքն՝ անգլիական զորահրամանատարը հայկական կողմին հասկացնում է, որ ձեռ քաշի Կարսից: Ս. Տիգրանյանը 1919 թ. մարտի 6-ին Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին ուղղած նամակ-հրահանգում այդ առիթով գրում է. «...բրիտանական զորահրամանատարությունը բավական վարանոտ փութկոտությամբ տեղի տվեց տեղական թյուրքության «նվճվոցների» առաջ: Օսմանյան և Ադրբեյջան թյուրք օֆիցերների ու ազիտատորների ձեռքով կազմակերպված տեղական «կառավարությունը» «Շուրա» մի տեսակ գրեթե ճանաչեց բրիտանական զորական նահանգապետը, իսկ մեր քաղաքացիական նահանգապետը իր պաշտոնյաներով ստիպվեց հեռանալ Կարսից: Ըստ անգլիական բացատրության, Թյուրքերի հայատյաց գրգռվածությունն էր գլխավոր պատճառը համաձայնության քանդման՝ բացի այդ առաջ է բերում և մանր պատճառաբանությունն՝ իբրեւ թե մեր քաղաքացիական նահանգապետը իր պաշտոնյաներով անտակտ եվ վախկոտ է գտնվել. մի պատճառաբանություն, որը ինքնաարդարացման մի խեղճ ու անվայել փորձ է հզոր պետության պաշտոնիայի բերանում եվ թերթում: Մեր քաղաքացիական նահանգապետը ընդհակառակն զեկուցում է, որ բրիտանական զորական նահանգապետը ոչինչ աջակցություն իրեն ցույց չտվեց եվ ոչ թե ինքը վախից հեռացավ այնտեղից, այլ իրեն հասկացրին, թե լավ կը լինի հեռանա»²⁷: Իրենց դժգոհությունն ու զայրույթը հայտնելով անգլիական զորահրամանատարության նոր դիրքորոշման առիթով՝ հայկական իշխանությունները նրան հասկացրին, որ չեն հրաժարվում Կարսի նահանգի նկատմամբ ունեցած իրավունքներից, և

²⁴ ՀԱԱ, ֆ.Պ-223, ց.1, գ.75, թ.21:

²⁵ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.77a:

²⁶ Նույն տեղում:

²⁷ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.2, գ.43, թ.1:

ստեղծված կացությունը ժամանակավոր է ու պետք չէ տեղի տալ թուրքերի շինծու և ոչ լուրջ հակառակությամբ²⁸:

Բրիտանական զորահրամանատարությունը իր գործելակերպով փաստորեն Անդրկովկասում նպաստում էր թուրքերի հակահայկական գործողություններին: Կարծում ենք՝ ապացուցելու հարկ չկա, որ Ջ. Ուոքերի և նրա ներկայացուցիչ գեղապետ Կ. Թեմպերլեյի պատճառաբանությունները անհիմն էին, որովհետև մինչև հունվարի 8-ի համաձայնագրի ստորագրումը հայ-մահմեդական թշնամական հարաբերությունների և հավանական բախումների մասին լավատեղյակ էր անգլիական զորական առաքելությունը, տեղեկացված էր նաև, որ Կարսի նահանգից թուրքերը հարկադրաբար արտաքսել էին շուրջ 100 հազար հայերի և մեծ թվով ռուսների: Անբողջովին փոխվել էր Կարսի նահանգի էթնիկ կազմը. բնակչության գերակշիռ մասը մահմեդական տարրն էր, որը տիրել էր նահանգի ամբողջ հարստությանը²⁹:

Ջ. Ուոքերի կողմից համաձայնագրի չեղյալ հայտարարելու (հունվարի 21-ին) կապակցությամբ հայկական կողմն իր դժգոհությունը հայտնեց նաև Թիֆլիսում «Համաձայնականների բարձր հրամանատարությանը»: Վրաստանում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Մարտիրոս Հարությունյանի փետրվարի 4-ի նամակում հայտնվում է. «Հայկական պատվիրակությունը պատիվ ունի բարձր հրամանատարությանը տեղեկացնելու հետևյալով.

Հայկական կառավարությունը նկատում է, որ նորին գերազանցության գեներալ Ուոկերը հրաժարվում է Հայկական վարչություն հաստատելու Ղարսի նահանգում, ինչպես նախապես նրա հետ համաձայնեցված էր:

Պատվիրակությունը պատիվ ուներ Ձեզ հայտնելու Հայաստանի Հանրապետության երկյուղը և խնդրվելու համաձայնականների բարձր հրամանատարությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելու այս հարցի վրա և հնարավոր միջոցներ ձեռք առնելու՝ նորին գերազանցության, գեներալ Ուոկերի կողմից նախատեսված ծրագիրն իրագործելու համար: Անհրաժեշտ է Ղարսի նահանգում Հայկական վարչություն հաստատել, հակառակ դեպքում, ըստ մեր պատվիրակության կարծիքի՝ մուսուլմանական ժողովրդի կողմից ցավալի հետևանքներ կարող են տեղի ունենալ»³⁰:

Կարևոր է նկատել, որ բացի թուրքամետ ու հակահայկական կողմնորոշումից բրիտանական զորահրամանատարության դիրքորոշման փոփոխության դրրոնապատճառ էր նաև Կարսի նահանգի նկատմամբ Կամավորական բանակի հավակնությունը, որը հայտնի դարձավ համաձայնագրի (հունվարի 8-ի) ստորագրումից հետո: Եվ քանի որ անգլիական հրամանատարի աչքում թուրքը ամենավտանգելի պատվարն էր Ռուսաստանի դեմ, նա իսկույն շտապեց ուղղել իր թույլ տված «սխալը» և Կարսը տվեց թուրքերին: Ինչպես Ահարոնյանին մարտի 6-ին ուղղած նամակ-հրահանգում նշում է արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը. «...Անգլիան չի ուզում հեռվել վորյեվե հայ ուժի վրա վորովհետև իր կարծիքով (յեվ դժբախտաբար վոչ միայն դրա կարծիքով) հայն ավելի յե ռուս, քան ռուսն ինքը, յեվ չե կարելի հեռվել հայի վրա, երբ Ռուսիայի դեմ բան ե ծրագրվում»³¹ (ընդգծումը մերն է. - Գ. Պ.):

Հասկանալի է, թե ինչու բրիտանական զինվորական նահանգապետ, գեղապետ Կ. Թեմպերլեյը հովանավորում էր Կարսի նահանգի «Հարավ-Արևմտյան Հանրապետության» թուրքական «կառավարչությանը»: Ավելին, նա հրաման էր

²⁸ Տե՛ս նույն տեղը:

²⁹ Տե՛ս "Вопросы истории", նշվ. տեղը, էջ 130, А. Демкин, նշվ. աշխ., էջ 211:

³⁰ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ. 122, գ.150, թ.183 ա:

³¹ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.2, գ.43, թ.2-3, տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 259:

արձակել առ այն, որ Կարսի նահանգ հայ գաղթականների վերադարձի համար պարտադիր պայման է, որ նրանք Ռուսաստանի հետ միավորվելուն ուղղված որևէ քարոզչություն չանեն³²: Կարսում թուրքերը պատրաստվում էին անգամ վրեժխնդիր լինել, եթե հայերը վերադառնային³³: Հայաստանի խորհրդի հունվարի 25-ի նիստում Արտ. Բաբայանը հայտնում է, որ «Ալեքսանդրապոլում, Արփաչայի ափերին կուտակված գաղթականությունը սովից կտտորում է: Սակայն նոքա դեռ չեն կարողանում մտնել Ղարսի շրջան: Անգլիացիք պատասխանատու են դրա համար: Ի՞նչ է մտածում այս մասին մեր կառավարությունը: Եթե այս դրությունը մի քանի օր էլ շարունակի, այն ժամանակ գաղթականության վերադարձի մասին այլևս խոսք չի կարող լինել, քանի որ նրանք բոլորը կտտորած կը լինեն: Պիտի ասել, որ անգլիացուց վրայ դրած մեր լույսերը չիրականացան»³⁴: Իսկ երբ Հայաստանի կառավարությունը խնդրեց օգնել հայ գաղթականներին վերադառնալու հայրենի տները, բրիտանական զեներալ Վ. Բիչը կտրուկ և վճռականորեն պատասխանեց. «...Կարսի նահանգը Հայաստանին չի պատկանում»³⁵:

Կարսի խնդրի հետ կապված անգլիական զորահրամանատարության հակահայկական գործելակերպն այնքան ակնհայտ էր, որ առաջ բերեց անգամ Համաձայնության պետություններից Ֆրանսիայի ներկայացուցիչների դժգոհությունն ու կշտամբանքը: 1919 թ. հունվարին (օրը չի հիշատակվում) Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելությունը զննապետ Կ. Թեմպերլեյնն ուղղված նոտայում գրում է, թե ինչպիսի անտարբերությամբ է բրիտանական առաքելությունը նայում հայերի նկատմամբ թուրքերի կողմից իրականացվող թալանին ու կողոպուտին: Նոտայում ներկայացվում է, որ «Ալի Ռիֆադ Բեյը, Օեֆկի փաշայի հետ միասին մինչև վերջը շարունակեցին Հայաստանի ժողովրդին թալանել, արհամարհելով բացե ի բաց մեր կողմից տված հրամանները: Մեր հեղինակությունը պահանջում է անմիջական հատուցում ստանալ այդ բոլոր գործողությունների դիմաց, որոնցից ամենաքիչ կարևորն՝ այսօրվա ներկայացրածն է: Անհրաժեշտ է անմիջական միջոցներ ձեռք առնել, եթե ոչ համաձայնականների հեղինակությունը շատ է ընկնում Կովկասի այս մասում»³⁶:

Կարսի նահանգը Հայաստանին հանձնելու գործում բացասական դերակատարություն ունեցավ նաև հարևան Վրաստանի կառավարությունը, որը նահանգի նկատմամբ ձգտումներ ուներ: Հայկական պատմական տարածքների նկատմամբ վրացիների հավակնությունը և դրանք յուրացնելու նրանց ձգտումը նոր երևույթ չէր, այլ հաճախ էր դրսևորվել երկու հարևան ժողովուրդների բազմադարյան հարաբերություններում: Այս անգամ էլ, օգտվելով ստեղծված խառն իրադրությունից, վրացիները փորձեցին զենքով նվաճել Կարսը: Նրանց այդ փորձը ձախողվեց: Վրացական զորքը, երբ «սկսեց զբաղեցնել այդ (Կարսի - Գ.Պ.) տարածքը,- գրում է զեներալ Ա. Դենիկինը,- այն հանգեցրեց մահմեդականների զինված դիմադրությանը և Կարսի նահանգապետի հայտարարությանը, որ վրացիների հարձակումը կհամարվի «հարձակում ուղղված Մեծ Բրիտանիայի դեմ»³⁷: Մեծ

³² Տե՛ս «Вопросы истории», նշվ. տեղը, **А. Деникин**, նշվ. աշխ., էջ 211, ինչպես նաև նույնի *Очерки русской смуты*, в 3 книгах.- Книга 3/т. 4, т. 5, «Революция и гражданская война в описаниях белогвардейцев», էջ 91:

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.2, գ.48, թ.1, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.3, թ.35:

³⁴ ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.87:

³⁵ ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.53, «Вопросы истории», նշվ. տեղում, **А. Деникин**, *Очерки русской смуты*, в 3 книгах.- Книга 3, т. 4, т. 5, «Вооруженные силы Юга России», էջ 211:

³⁶ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ. 91:

³⁷ «Вопросы истории», նշվ. տեղում, **А. Деникин**, նշվ. աշխ., էջ 211:

Բրիտանիայի համակրանքը շահելու և իրենց նպատակին հասնելու համար վրացիները կրկին գործի դրեցին փորձված զենքը՝ հայերին զրպարտելը ու նրանց ռուսական կողմնորոշումը վկայակոչելը, թե «...Հայաստանի կառավարությունը համաձայնություն ունի գեներալ Դենիկիևի հետ»³⁸, «...հայերը ցանկանում են ռուսների վերադարձը Կովկաս և դժգոհ են Անգլիական քաղաքականությունից»³⁹, «...հայերի միակ երազանքը Ռուսաստանին վերամիավորվելն է»⁴⁰ և այլն: Վրացիների այդ զրպարտությունը ավելի էր խորացնում Մեծ Բրիտանիայի կառավարության կասկածամտությունը և տարակուսանքը, թե Կարսի նահանգի հանձնումը Հայաստանին նշանակում էր այն միացնել Ռուսաստանին: Այդ մտայնությունը փարատելու նպատակով Ս. Տիգրանյանը Ա. Ահարոնյանին ուղղած նույն մարտի 6-ի նամակ-հրահանգում գրում է. «Թվում է թե Կարսի շրջանը Հայաստանին կցելու խնդիրը հանգիստ սրտով Անգլիան կլուծի այն ժամանակ, երբ կհավաստիանա, որ այդ Հայաստանը չի կցվելու (կամա թե ակամա) Ռուսաստանին: Մենք պետք է փարատենք անգլիացիների տարակուսանքները և պնդենք, որ Կարսի շրջանը, հատկապես արևելյան մասը (մեր «պերեցելի» գծով) Հայաստանի անկախ մնալ ցանկացող Հայաստանի, բաժինն է և պիտի ենթարկվի մեր կառավարության սովորական իշխանությանը»⁴¹ (ընդգծումը մերն է. - Գ.Պ.): Հայտնի է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձգտում էր Անդրկովկասը, այդ թվում նաև Կարսի նահանգը զերծ պահել դենիկիևյան ազդեցությունից և այն ամբողջապես անջատել Ռուսաստանից: Գեներալ Ա. Դենիկիևը գրում է, որ Ջ. Ուոքերը համաձայնել էր այն տեսակետին, որ «Կարսի և Բաթումի նահանգներ՝ ռուս գաղթականների վերադարձի համար պարտադիր պայման է, որ նրանք բոլշևիկյան կամ Ռուսաստանին միավորվելուն ուղղված քարոզչություն չանեն»⁴²: Բրիտանական զորական առաքելությունը կարծում էր, թե Կարսի նահանգի հանձնումը Հայաստանին նշանակում է այն հանձնել Ռուսաստանի հարավին: Այդ ընթացքում տեղի ունեցան դրամատիկ իրադարձություններ: Կարսի «Օուրան» և թուրքական 12-րդ բանակը չէին կասկածում, որ վաղ թե ուշ ազատելու են նահանգի տարածքը, ուստի ստիպված են կատարելու դաշնակից մեծ պետությունների պահանջը, որը բխում էր Մուդրոսի զինադադարից: Նրանք փորձում էին նահանգի նկատմամբ Կամավորական բանակի ձգտումը հակադրել Մեծ Բրիտանիայի հակառուսական քաղաքականությանը և այն ծառայեցնել իրենց նպատակներին: Որպեսզի խանգարեին Կարսի նահանգի հանձնումը Հայաստանին, թուրքերը դիմեցին խորամանկության և հայտարարեցին. «Եթե ոչ թուրքական, ապա միայն ռուսական իշխանություն»⁴³: «Նրանք ցանկություն են հայտնել շուտափույթ միանալու Ռուսաստանին, - գրում է գեներալ Ա. Դենիկիևը: - Ռուս նահանգապետի նշանակումը նրանք համարում էին ստեղծված բարդ էթնիկական կոնֆլիկտի միակ անարյուն լուծումը»⁴⁴: Հունվարի կեսերին թուրքերը նույնիսկ պատվիրակություն ուղարկեցին Համաձայնական պետությունների մոտ՝ խնդրելու Կարսի «նահանգը միացնել Ռուսաստանին»⁴⁵: Հետագայում «Օուրան» նման պահանջով երկու անգամ դիմել է անգլիացիներին և պատվիրակություններ ուղարկել Ամերիկա և

³⁸ ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.193, մաս I, թ.23, ց.2, գ.65, թ.1:

³⁹ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.181, մաս I, թ. 36:

⁴⁰ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.193, մաս I, թ. 35:

⁴¹ ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, № 4063, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.193, մաս I, թ.26-27, ց.2, գ.65, թ.3-4:

⁴² «Вопросы истории», նշվ. տեղում, А. Деникин, նշվ. աշխ., էջ 211:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ. 35:

Եվրոպա⁴⁶: Նահանգի խնդրում մահմեդականների ու ռուսների համերաշխությունը և շահերի ընդհանրությունը պայմանավորված էին տարածաշրջանի անգլիական բռնազավթումով: Տարածվել էր այն տեղեկատվությունը, որ «անգլիացիները ցանկանում են գրավել ողջ Անդրկովկասը, որին դեմ են ամերիկացիները և ֆրանսիացիները»⁴⁷: Անդրկովկասի բռնազավթմանը դեմ էին նաև Թուրքիան և Ռուսաստանը: Փաստորեն տեղի ունեցավ անհավատալի՝ Կարսի խնդրում դրսևորվեց երկու դարավոր թշնամիների՝ Թուրքիայի և Ռուսաստանի շահերի ընդհանրությունը և նրանց համերաշխ համագործակցությունը:

«Հատուկ խորհրդակցության» համար «...նախընտրելի էր թաթարների և անգամ թուրքերի իշխանությունը, քան նախատեսվող անգլիական բռնազավթումը, գրում է Մ. Պապաջանովը: - Ռուսները մտածում էին, որ Ռուսաստանի հզորանալու դեպքում թաթարական և թուրքական իշխանությունը ավելի հեշտ կլինի տապալել, քան Անգլիականը: Եվ դրանից ելնելով՝ ռուսները թուրքերի տիրապետության ընթացքում բարյացակամ վերաբերմունք էին դրսևորում նրանց նկատմամբ»⁴⁸:

Իրականում Կարսում նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել նաև Կամավորական բանակի համար՝ Ռուսաստանին հանձնելու նահանգը: «Հատուկ խորհրդակցության» հանձնարարականով Հայաստանի կառավարությունում գինվորական և քաղաքական հարցերով ներկայացուցիչ գեղապետ Լեսլին Կարսում սկզբնական քանակցել մահմեդական ներկայացուցիչների և թուրքական 12-րդ բանակի հրամանատարության հետ, որպեսզի մինչև նահանգից վերջինս հեռանալը (Ռունվարի 25-ին), այն հանձնեն ռուսներին: Գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված 1919 թ. զեկուցագրում (չի հիշատակում ամիսը և օրը) գեղապետ Լեսլին տեղեկացնում է Կարսում առաջին բանակցությունների արդյունքի մասին. «...Կարս-Բաթում շրջանի բնակչությունը հայերի դեմ է տրամադրված, դրա համար ես անգլիացի կապիտան Գրինին առաջարկեցի այդ տարածքում գեներալ-նահանգապետություն ստեղծել՝ ղեկավար նշանակելով գլխավոր շտաբի մեր սպաներից մեկին (օրինակ՝ գեղապետ Զինկևիչին)»⁴⁹: Հունվարի սկզբներին «Հատուկ խորհրդակցությանը» ուղղված մեկ այլ զեկուցագրում գեղապետ Լեսլին գրում է. «Ժամանելով Կարս՝ պատահաբար հանդիպեցի անգլիացի մայորի, որը այստեղ էր եկել մեր և գեներալ Բիչի միջև կապ հաստատելու համար: Ցավալի է, որ դուք նրա հետ ոչինչ չեք ուղարկել: Նա չգիտի իմ գոյության մասին»⁵⁰: Նույն զեկուցագրում Լեսլին նշում է, որ «իրավիճակը բավականին տագնապալի է, քանի որ անգլիացիները այստեղ ղեկավարներ են նշանակում հայերին ...երեկ ինձ մոտ էր եկել մահմեդականների պատվիրակությունը: Նրանք հայտարարեցին, որ կընդունեն միայն ռուս նահանգապետ, ...որ իրենք ունեն կազմակերպված զորամասեր, մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Եթե ռուս նահանգապետ չնշանակեն, նրանք ոչ ոքի չեն ընդունի և կնախընտրեն բոլորը մեռնել, քան ստրկության մեջ լինել հայերի կամ ա... (անգլիացիների.- Գ.Պ.) մոտ: Թուրքական նաղին (ավազը հիմա այստեղ է) նույնպես առաջարկեց ինձ մնալ՝ ասելով, որ միայն ռուսական դրոշով կարող եմ այստեղ կարգ պահպանել: Նա թուրքական հրամանատարության անունից խոստացավ ցույց տալ ամեն հնարավոր օգնություն»⁵¹: Հունվարի 13-ին գեղապետ Լեսլին դարձյալ առանց Հայաստանի կառավարության գիտության ու

⁴⁶ Տե՛ս նույն տեղը:

⁴⁷ ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ. 35:

⁴⁸ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.5, թ. 193, մաս I, թ.12:

⁴⁹ ԴԱ ՔՓ, ֆ.446, օռ.2, Ժ.9, յ.34, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.30.

⁵⁰ ԴԱ ՔՓ, ֆ.446, օռ.2, Ժ.9, յ.29-30, ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.24-25.

⁵¹ Տե՛ս նույն տեղը:

համաձայնության գաղտնի մեկնել էր Կարս, հանդիպել մահմեդական բնակչության, անգլիական գորական առաքելության, «Օտուրաի» և թուրքական հրամանատարության պատվիրակության հետ: Այդ կապակցությամբ հունվարի 27-ին գեներալներ Ա. Դրագոմիրովի և Վյազմիտիևիչի նուղված գեկուցում գնդապետ Լեսլին գրում է. «...թուրքական հրամանատարությունը ինձ շատ ջերմ ընդունեց և, արտահայտելով իր բարեկամական վերաբերմունքը ռուսների նկատմամբ, ցանկություն հայտնեց կապ հաստատել մեր հրամանատարության հետ:

Նրանք ցանկություն հայտնեցին շուտափույթ կերպով միանալ Ռուսաստանին և առաջարկեցին ինձ մնալ իրենց մոտ որպես նահանգապետ: Անգլիացիներին նրանք ընդունեցին ջերմորեն, բայց, ինչպես իրենք հայտարարեցին, հետևյալ խոսքերով. «Մենք ուրախ ենք ընդունելու Ձեզ որպես դաշնակիցներ, որպես հաղթողներ և որպես ռուսական տարածքում թանկագին հյուրեր»: Նրանք ասում էին, որ իրենք կապ են պահպանում Բաթումում գտնվող մեր գեներալի հետ (ազգանունը պարզել չհաջողվեց), և որ իբր նա հեռագրել է իրենց, որպեսզի նահանգ չթողնեն ոչ անգլիացիներին, ոչ հայերին»⁵²:

Գնդապետ Լեսլիի գաղտնի գործունեությունը Կարսի նահանգում դժգոհության ալիք առաջացրեց հայ պետական, քաղաքական գործիչների, կուսակցությունների և խորհրդարանականների շրջանում: 1919 թ. հունվարի 21-ին Ս. Տիգրանյանը գնդապետ Լեսլիին ուղղված № 88 պաշտոնական գրությամբ պահանջեց ներկայացնել բացատրություն, թե արդյոք ճիշտ է, որ նա Կարսի անգլիական զինվորական նահանգապետ Կ. Թեմպերլեյի հետ ունեցած բանակցությունների ընթացքում պահանջել է նահանգում «...հաստատել ոչ թե հայկական, այլ մուսուլմանական կառավարում ռուս նահանգապետի գլխավորությամբ»⁵³: Հաջորդ օրը՝ հունվարի 22-ին, գնդապետ Լեսլին Ս. Տիգրանյանին ուղղված պատասխան մատուցում գրում է, որ «...Կարսում պաշտոնական խոսակցություն քաղաքական խնդիրների շուրջ չեմ ունեցել, սակայն անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ Կ. Թեմպերլեյին խորհուրդ եմ տվել, որ այդ ծանր վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է նահանգապետ նշանակել ազգությամբ ռուսի, որն ամիջապես կապի մեջ կլինի Հայաստանի կառավարության հետ: Իմ կողմից երբեք չի պահանջվել նահանգում հաստատել մուսուլմանական կառավարում»⁵⁴: Ասվածից ակնհայտ երևում է, որ գնդապետ Լեսլին վարպետորեն թաքցնում է Կարսում իր վարած բանակցությունների իսկությունը: Երևանում լույս տեսնող «Ժողովուրդ» պարբերականը 1919 թ. № 10-ում, մերկացնելով Լեսլիի գաղտնի գործունեությունը, նշել է, որ «Գեներալ Դեմիկիևի ներկայացուցիչ գնդապետ Լեսլին ...ինքնագլուխ բանակցությունների մեջ է մտել անգլիական գնդապետ Կ. Թեմպերլեյի հետ և հակահայկական պրոպագանդա է վարել Երևանում, Էջմիածնում և ձգտում է անգլիացիներին հակադրել մեզ հետ: Նրա նպատակն է Կարսի նահանգում ստեղծել ռուս-թաթարական վարչակազմ»⁵⁵: Գնդապետ Լեսլիի գործունեության շուրջ հետաքրքրությունը հետզհետե մեծանում է:

Ըստ այդմ, հունվարի վերջին ժողովրդական կուսակցության ֆրակցիան դիմել է Հայաստանի խորհրդի նախագահությանը՝ հարցում անելու արտաքին գործերի և զինվորական նախարարներին, թե հայտնի⁶ է արդյոք իրենց, որ «...Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Լեսլին բացարձակ կերպով ագիտացիա է մղում հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության դեմ և ճիշտ է արդեօք,

⁵² ՀԱԱ, ֆ.Պ-277, ց.1, գ.5, թ.35-36, տե՛ս «Вопросы истории», նշվ. տեղում, А. Деникин, նշվ. աշխ., էջ 211:

⁵³ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, թ.4,10:

⁵⁴ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, թ.5,11:

⁵⁵ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, թ.6,14:

որ գնդ. Լեւիին առնում է զինվորական մինիստրությունից 1000 ռուբլի ռոճիկ աս-
սական և եթե առնում է ապա ինչ գումարներից»⁵⁶: Հայաստանի խորհրդի 1919 թ.
փետրվարի 11-ի նիստը անդրադարձավ այդ հարցին⁵⁷:

Խորհրդի նիստում մի շարք խորհրդարանականներ ներկայացրին փաստեր
Կարսի հարցում գնդապետ Լեւիի հակահայկական գործունեության մասին: Քա-
նի որ որոշ խորհրդարանականներ չգիտեին Լեւիի ով լինելը, խորհրդում նրանց
կողմից հնչեցին հետևյալ հարցադրումները. «Գնդապետ Լեւիին որևէ վկայական
ունի»⁵⁸ Դեմիկիճի կամ Կամավորական բանակի շտաբի կողմից՝ և եթե ունի, այդ
վկայականի մեջ ասա՞ծ է, որ նա քաղաքական հարցերի համար ուղարկվում է Հա-
յաստանի կառավարութեան մօտ»⁵⁹, «Ինչ պաշտոն ունի Լեւիին»⁶⁰ և այլն: Այդ իրո-
դությունը խոսում է այն մասին, որ հանրապետությունում որոշ պետական, հասա-
րակական-քաղաքական կազմակերպություններ, կուսակցություններ և լրատվա-
կան միջոցներ տեղեկացված չէին հայ-ռուսական հարաբերությունների մասին:
Հարկ է նշել, որ կառավարությունը հասկանալի պատճառներով փորձում էր
զաղտնի պահել Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորում-
ների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների ընթացքը, որով-
հետև այն կարող էր շահարկումների առարկա դառնալ թե՛ հարևան Վրաստանի ու
Ադրբեջանի և թե՛ անգլիական զինվորական առաքելության կողմից:

Խորհրդի նիստում Արտաքին գործերի և զինվորական նախարարները
խիստ զգուշավոր էին: Նրանք փորձում էին համոզել խորհրդարանականներին,
որ գնդապետ Լեւիի գործունեության մեջ վտանգավոր միտում չկա: Հայ ժողովըր-
դական կուսակցության ֆրակցիայի հարցմանը արտաքին գործերի նախարարը
պատասխանեց. «...Պիտի ասեմ, որ հարցման մեջ որոշակի ոչինչ չի ասված, ինչ-
պես և փաստ չկա, որ հիմք ծառայի: Ես միայն մի դեպք գիտեմ, որի մասին գրա-
ւոր դիմել եմ Լեւիին և բացատրություն պահանջել: Այդ վերաբերում է Կարսին...
Նա այն միտքն է յայտնել, լավ կը լիներ թե՛ մի ռուս նահանգապետ լիներ Կարսի
շրջանում, որը կարող կը լիներ զսպելու հայ-թաթարական լարած յարաբերու-
թիւնները: Այդ նահանգապետը համաձայն նրա առաջարկի պիտի ենթարկի Հա-
յաստանի կառավարութեանը: Ես նրա արածների մեջ դիտատրիալ ոչինչ չեմ գրտ-
նում և յայտնում եմ, որ նա դեպի հայ ժողովուրդը որևէ չարակամություն չունի»⁶⁰:
Ս. Տիգրանյանի պատասխանից պարզ երևում է, որ խորհրդում կրքեր չբորբոքե-
լու համար նա փորձում է մեղմել գնդապետ Լեւիի գործունեությունը Կարսում:
Այնուհետև հարցի քննարկման ընթացքում եղան բազմաթիվ այլ հարցապնդում-
ներ՝ ուղղված արտաքին գործերի և զինվորական նախարարներին՝ բացահայ-
տելու ճշմարտությունը գնդապետ Լեւիի ու նրա գործունեության մասին, թե այն
արդյոք չի հակասում Հայաստանի Հանրապետության ու նրա անկախության շահե-
րին: Նշված գերատեսչությունների ղեկավարներն իրենց պատասխաններում ցույց
տվեցին, որ Կամավորական բանակի գնդապետը չի չարաշահել իր դիրքը և
կոնկրետ հակահայկական գործունեություն չի ծավալել: Բոլոր դեպքերում Հայաս-
տանի Հանրապետության խորհրդում գնդապետ Լեւիի շուրջը ծավալված քննար-
կումները ցույց տվեցին, որ հանրապետությունն անդրդվելի է իր անկախության

⁵⁶ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, թ.17:

⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.120:

⁵⁸ Մանրամասն տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության առնչու-
թյունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ
(1918 թ. հունիս-նոյեմբեր), Եր., 2004, էջ 58-59:

⁵⁹ ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.133:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.131:

պահպանման, տարածքային ամբողջության ապահովման և Կարսի նահանգը վերադարձնելու հարցում:

1919 թ. հունվարի վերջերին Կարսի շարչրկված խնդրում նկատվեց թեկու՛մ հօգուտ Հայաստանի: Նախ անգլիական զինվորական նահանգապետը՝ գնդապետ Կ. Թեմպերլեյը, համոզվեց, որ շտապել է՝ Կարսը հանձնելով թուրքերին: Նրան հայտնի դարձավ, որ Մեծ Բրիտանիայի «վստահելի» մահմեդականները, թուրքական 12-րդ բանակի հրամանատարությունը և «Շուրան», համագործակցելով Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, ձգտում են նահանգում ոռուսական իշխանություն հաստատել: Մի հանգամանք, որն իրապես հակասում էր Մեծ Բրիտանիայի հակառուսական քաղաքականությանն Անդրկովկասում: Այնուհետև թուրքերն այլևս չէին եմթարկվում բրիտանական զինվորական նահանգապետին, չէին կատարում նրա կարգադրությունները: Հասկանալի է, թե ինչու բրիտանական զինվորական առաքելությունը սկսեց աստիճանաբար փոխել իր վերաբերմունքը «հավատարիմ» մահմեդականների նկատմամբ:

Կարևոր է նշել, որ հարցի լուծումն արագացվեց Ֆրանսիայի միջամտությամբ: Որպես համաձայնության պետություններից մեկը՝ Ֆրանսիան հետևում էր դեպքերի ընթացքին: Ինչպես արդեն նշել ենք, Կարսում անգլիական զորահրամանատարության հակահայկական գործելակերպի առնչությամբ Ֆրանսիայի ներկայացուցիչն արտահայտել էր իր դժգոհությունը: Այս անգամ հունվարի 26-ին Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելությունը գնդապետ Կ. Թեմպերլեյին ներկայացրեց նոտա բավական խիստ տոնով. «Ղարսում մենք միայն թաթարական հարցի ծայրն ենք տեսնում, որ ձգվում է Բաքվից մինչև Բաթում, անցնելով Թավրիզից, Երևանի և Ղարսի հարավով: Պետք է Թիֆլիզում մի ընդհանուր քաղաքականություն մշակվի, որպեսզի ընդհանուր միջոցներ ձեռք առնվեն և նույնանման լինեն»⁶¹: Այնուհետև պահանջվում է շտապ միջոցներ ձեռք առնել. դաշնակիցների բարձր հրամանատարությունը զորացրված թուրք սպաներին պետք է վտարի թաթարների մոտից, վերացնի թրքական պրոպագանդիստներին, Էրզրումում կենտրոնացած 9-րդ բանակի քանակը պակասեցնի: Այդ բանակը, որ լրացվել էր Ելիզավետպոլի բանակի մնացորդներով, սպառնալիք էր Հայաստանի Հանրապետության համար, բացի դրանից՝ այն ֆանատիզմի և ազգայնամոլության օջախ էր՝ ուղղված հայերի դեմ⁶²: Նոտայում պահանջվում էր հայկական իշխանությունների հետ քննարկել Երևանին սպառնացող թաթարական ու քրդական շարժման առաջն առնելու համար անհրաժեշտ զինվորական միջոցների հարցը: Թաթարների հետ խիստ վարվել և նրանց հետ շփվել միայն հրամաններ արձակելիս⁶³: Թաթարները Ադրբեջանի թուրքերն էին, որոնք, թուրքական պետության ուժերի հետ համագործակցած, վարում էին հակահայկական քաղաքականություն, ինչը չէր վրիպում ֆրանսիացիների աչքից: Ինչպես նկատում ենք, ֆրանսիական նոտան գրվել է իրադրության խոր ու համակողմանի ուսումնասիրության հիման վրա, արտահայտում է Մուդրոսի դաշնագրի ոգին ու պահանջները, դրսևորում է օրյելտիվ մտնեցում խնդրի լուծմանը և արտահայտում է հայության շահերը: Ֆրանսիայի նոտայի և այլ գործոնների ազդեցությամբ տարածաշրջանում հետզհետե փոխվում էին անգլիական զորական առաքելության թուրքամետ հակումները: Անգլո-թուրքական հարաբերությունների սրման հետևանքով փոխվում էր նաև Մեծ Բրիտանիայի մարտավարությունը առհասարակ մուսուլմանության նկատմամբ: Փարիզից 1919 թ. ապրիլի 24-ին Ա. Ա. հարոնյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին

⁶¹ ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.88ա-88բ:

⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.92, մաս I, թ.88ա-88բ:

⁶³ Տե՛ս նույն տեղը:

ուղղված նամակում ասում է, որ Կարսի մասին «ունեցած տեղեկությունների հիման վրա անմիջապես դիմեցի անգլիական պատվիրակությանը: Նրանց խուսափողական, հաճախ անորոշ պատասխաններից ես նկատում եմ, որ Ձեր մտածումը ճիշտ է - անգլիացիների Կովկասում ցուցադրած թուլությունը, Կովկասում և թաթարների սիրաշահելը արդյունք է այն ընդհանուր և օրավոր աճող հուզումին, որ տիրում է այսօր համայն մուսուլման արևելքում և մասնավորապես Հրնդկաստանում ու Եգիպտոսում: Ամբողջ Եգիպտոսը բացարձակ ապստամբության մեջ է ընդդեմ բրիտանական իշխանության»⁶⁴:

Մարտի վերջերին իրավիճակը կտրուկ փոխվեց. առժամանակ անհետացան անգլիացիների թուրքամետ հակումները⁶⁵: Փոխվեց նաև բրիտանական զինվորական առաքելության մարտավարությունը Կարսի նահանգի նկատմամբ: Արտաքին գործերի փոխնախարար Ալ. Խատիսյանը 1919 թ. մայիսի 6-ին Ա. Ահարոնյանին ուղղած N1555 նամակ-հրահանգում գրում է. «վերջին ապրել ամսի ընթացքում Անգլիացիների քաղաքականությունը որոշ կերպով փոխվեցավ դեպի Ղարսի և Նախիջևանի խնդիրները. Ի՞նչով բացատրել այդ փոփոխությունը: Բրիտանական հրամանատարությունը զգա՞ց որ սխալ է Կովկասում իր վարած քաղաքականությունը, թե տեղի տալով բարձրից եկած հրամաններին փոխեց իր տակտիկան, մինչև այժմ այս հարցը մեզ համար պարզ չէ, բայց կարծում ենք, որ վերջինը ավելի հավանական է. թերևս այս խնդրում որոշ կերպով ազդեց նաև թուրքերի ունեցած վերաբերմունքը Անգլիացիների հանդեպ, Ղարսի Թուրքական Օտրան (կառավարությունը) սկսել էր արհամարհել էր Բրիտանական հրամանատարության կարգադրությունները, սերտ հարաբերություն էր պահում օսմանյան ազենտների հետ և նրանց ցուցմունքներով շարժվում: Անգլիացիք՝ ստիպվեցան կտրուկ միջոցների դիմել. ձեռքակալեցին Օտրանի բոլոր անդամներին և ուղարկեցին Թիֆլիս: Սրանից հետո էր, որ նրանք համաձայնվեցին Ղարսի շրջանը հանձնել հայերին, ապրիլի 23-ին մեր զորքը խաղաղ կերպով մտավ Ղարս, և հայ ադմինիստրացիան հաջորդ օրը հետևեց զորքին»⁶⁶: Այնուհետև Ալ. Խատիսյանը շարունակում է. «Անգլիացիք թէև հանձնել են մեզ Ղարսը, բայց դեռ բոլորովին ձեռք չենք քաշում դրանից. հանձնումից վերջը անոնք սկսել են դուրս տանել բերդից մեծ քանակությամբ ռազմամթերք, երկաթուղային և ավտոմոբիլային սարքեր, բամբակ և այլն»⁶⁷:

«Հարավ Արևմտյան կառավարությունը» վերացնելուց հետո իշխանությունը անցնում է նահանգապետին ու նրա կողմից ձևավորված խառը ազգային խորհրդին: Խորհուրդը գործում է միայն երեք շաբաթ: Օգտվելով տեղի ունեցած միջամտությունից՝ վրացական զորքերը մտնում են «հանրապետության» հյուսիս և գրավում են Ախալցխան ու Արդահանը, բայց անգլիացիների պահանջով ետ են քաշվում⁶⁸: Հայկական զորքերը անգլիացիների համաձայնությամբ զբաղեցնում են ողջ Կարսի նահանգը, որը մտնում է Հայաստանի կազմի մեջ, և Կարսում նշանակվում է հայ նահանգապետ: Ալ. Խատիսյանը 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդում հայտարարեց. «Ղարսի նահանգը արդեն մեր ձեռքում է»: Մինչև հունիսի 3-ը Կարս է վերադարձել շուրջ 300 հազար զաղթական⁶⁹:

⁶⁴ ՀԱԱ, ֆ. Գ-200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 425:

⁶⁵ Տե՛ս «Вопросы истории», նշվ. տեղը, А. Деникин, նշվ. աշխ., էջ 211:

⁶⁶ Կարսի անգլիական զինվորական նահանգապետ, գնդապետ Կ. Թեմպելդեյնի փոխարինեց գեներալ Ասսերը:

⁶⁷ ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 2, գ. 963, թ. 131, ՀԱԱ, ֆ. Գ-200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 222, ց. 2, գ. 55, թ. 1:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Տե՛ս «Вопросы истории», նշվ. տեղը, А. Деникин, նշվ. աշխ., էջ 211:

⁶⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Գ-200, ց. 1, գ. 35, թ. 88, գ. 291, մաս III, թ. 461, «Հայաստանի աշխատավոր» թերթ, Եր., 07.06.1919:

Կամավորական բանակի հետախուզական բաժնի պետը շտապեց հաղորդել գեներալ Ա. Դենիկինին, որ «...վերջերս անգլիացիները հայերին են հանձնել Կարս քաղաքը և համանուն նահանգը (նախկին «Հարավ-Արևմտյան կառավարությունը»)»⁷⁰: Կարսի խնդրում անհաջողություն կրելուց հետո Կամավորական բանակը փորձեց Փարիզում ռուսական դեսպանության միջամտությամբ լուծել ռուս զաղթականության վերադարձի հարցը: Այդ նպատակով մայիսի 18-ին Փարիզից Լոնդոն մեկնեց գեներալ Դ. Սազոնովը՝ անգլիական կառավարությանը խնդրելու. «1) Ռուսաստանյանների վերադարձը (Կարսի նահանգ.- Գ.Պ.)..., 4) Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը Բաթումի և Կարսի խորհուրդներում»⁷¹:

Այսպիսով, արխիվային վավերագրերի ուսումնասիրությունից հանգում ենք այն համոզման, որ հայ-ռուսական հարաբերությունների առկայությունը իր որոշակի դերակատարությունը ունեցավ Կարսի հարցում: Այդ հանգամանքը շահարկեցին թե՛ անգլիական զինվորական առաքելությունը և թե՛ Հայաստանի հարևաններ Վրաստանն ու Ադրբեջանը: Այդ խնդրում որոշակի բացասական դերակատարություն ունեցավ նաև մահմեդականության և Կամավորական բանակի համագործակցությունը Կարսի նահանգում ռուսական իշխանություն հաստատելու գործում:

Ի վերջո մի շարք դրամատիկ իրադարձություններից հետո ավարտվեց պայքարը Կարսի շուրջը, և նահանգը վերադարձվեց տիրոջը՝ Հայաստանին: Իսկ թե ինչու վերջինս չկարողացավ պահպանել այն և որոշ ժամանակ հետո նորից կորցրեց, արդեն այլ հարց է, որը դուրս է ներկա հոդվածի շրջանակներից:

Г. А. ПЕТРОСЯН - Проблема Карса и борьба вокруг него (декабрь 1918г. - апрель 1919г.). На основе вновь исследованных архивных документов впервые в армянской историографии автор осветил борьбу вокруг Карсской губернии после первой мировой войны. Исследование привело к выводу, что армяно-русские отношения сыграли свою отрицательную роль в вопросе Карсской губернии. Это обстоятельство использовали в своих корыстных интересах и английская военная миссия, и соседи Армении - Грузия и Азербайджан. В этом вопросе свою негативную роль сыграло также сотрудничество мусульманских сил и Добровольческой армии юга России, направленное на установление российской власти в Карсской губернии. После ряда драматических событий завершилась борьба вокруг Карса и губерния была возвращена исконному хозяину - Армении.

⁷⁰ ԳԱ ԲՓ, ֆ.446, օպ.2, Ժ.34, Լ.3.

⁷¹ ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.97, թ.104: